

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թ-ի փետրվարի 21-ին կայացած փիլիսոփայության և հոգեբանության  
ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2017 – 2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփումը;
2. Հոգեբանություն մասնագիտությամբ հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքների ամփոփում;
3. Բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման և գնահատման կարգը / վերջնական տարբերակ/;
4. Մանկավարժական /4-րդ կուրս/ և արտադրական /3-րդ կուրս/ պրակտիկաների հարցը / զեկ . պրակտիկայի ղեկավարներ/;
5. ԵՊՀ-ի հետ համագործակցության շրջանակներում օտարերկրյա ուսանողների համար անգլերեն լեզվով հոգեբանություն մասնագիտության առկա ուսուցմամբ բակալավրիատի ծրագրի մշակման հարցը;
6. Ընթացիկ հարցեր;

1. Լսեցին՝ 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ ղեկան Ա. Բաղդասարյանը ամփոփեց քննության արդյունքները, որոնք գոհացուցիչ են: Պրոֆեսորներ Հր. Միրզոյանն ու Էդ. Հարությունն առաջարկեցին, որ ուսանողի 60 ժամ բացակայության դեպքում պետք է քննություն վերցնել հանձնաժողովով:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

2. Լսեցին՝ Հոգեբանություն մասնագիտությամբ հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց արդյունքները, որոնք դրական էին և գոհացուցիչ: Նախագահը ևս դրական եզրակացություն է տվել:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ Բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման և գնահատման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց վերջնական տարբերակը: Նա նշեց, որ բողոքարկման կարգի մեջ կա փոփոխություն, ըստ որի ուսանողն իրավունք ունի բողոքարկելու միայն քննության ընթացակարգի վերաբերյալ: Ն. Խաչատրյանը, Լ. Գարգրյանը, Գ Շահվերդյանը նշեցին, որ բակալավրիատի աշխատանքները ճիշտ կլինի, որ գրախոսվեն մյուս ամբիոններում, իսկ մագիստրոսական թեզերը՝ դրսում:

Որոշեցին՝ ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝ Մանկավարժական և արտադրական պրակտիկաների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Պրակտիկայի ղեկավարներ Ա. Հակոբջանյանը, Ս. Սարգսյանը. Լ. Գարգրյանը, Է. Ջաքարյանը ներկայացրեցին 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկաները: Նրանք նշեցին, որ ընդհանուր առմամբ լավ է անցնում պրակտիկան: Գ. Շահվերդյանը և Գ. Պետրոսյանը կարևորեցին հատկապես մագիստրատուրայի պրակտիկայի հարցը, մանավանդ հոգեբանների մոտ:

Որոշեցին՝ Գիտխորհրդի նիստերից մեկին հրավիրել պրակտիկայի ընդհանուր համակարգող պ. Աթայանին, և քննարկել որոշ հարցեր:

5. Լսեցին՝ Օտարերկրյա ուսանողների համար անգլերեն լեզվով հոգեբանություն մասնագիտության առկա ուսուցմամբ բակալավրիատի ծրագրի մշակման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ դեկան Ա. Բաղդասարյանը հանձնարարեց ամբիոնի վարիչներին, ներկայացնելու անգլերեն լեզվով ծրագրերը քննարկման:

6. Ընթացիկ հարցեր:

- Հաստատեցին գիտության կոմիտեին ներկայացվելիք թեմաները;
- Ամբիոնների կողմից ներկայացված աշխատանքների տպագրության ներկայացման հարցը;
- Լ. Ստեփանյանի ղեկավարման երաշխավորման հարցը:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան